



ԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ

Գիարբեքիր՝ քուր

Գիշերային թռիչք վերցրինք: Գիարբեքիրում ծանոթ չունեինք, որ դիմավորելու գար, ու գիշերը թռնելով՝ արկածի հետեւից էինք, թե չէինք՝ չիմացանք:

Նախապատրաստական միջոցառումներից Սոնան կատարել էր միայն էն, որ ճշտել էր մի հայկական տան հասցեն, որն հիմա որպես օթել էր ծառայում, եւ էն, որ մեզ մի քիչ էժան կտան: Բայց օդանավակայանի սպասասրահում անհանգստանալու առիթներն սկսեցին մի թեթեւ բզել արդեն, ու ես ու Սոնան իրար երես նայեցինք՝ բոլոր բառերը սպառած հին ընկերության անբառ արտահայտություններով: Անկանոն իրավիճակներում Սոնան հիմնականում հարցականներն է կախում օդում կամ մերժումները, ես՝ հուսադրումներն ու հաստատումը՝ մի վախեցի, ես ստեղ եմ:

Ահագին դիսկոլիսկացինք ամպերի վրա, հետո իջանք կրպակի մոտ, որ Գիարբեքիրի օդանավակայանն էր, պտտվող ժապավենի վրայից բեռներն արագ թռչկվեցին ու սրահը դատակվեց, դռներն անգամ փակեցին: Մնացինք մենք՝ մթության մեջ դիմագրավելու մի քանի տաքսու վարորդներին, որ երկար մոլտում էին Սոնայի handmade քարտեզի վրա, որ փոքրիկ նոթատետրում աճապարանք գծված երկու գիծ էր ու որեւէ կետ մատնանշել չէր կարող՝ պոկված լինելով մեծ տարածքի հետ հարաբերությունից ու հասցված անընթեռնելի փոքրության: Վարորդները շտապում էին, հասցեն տեղը չէին բերում, բայց բեռներն արդեն տեղավորել էին թափքում, ու իրար մեջ քննարկում էին, թե որ մութ անկյունում կարող է գտնվել այդ հայկական տունը, ուր ուզում են գնալ այս երկու աղջիկները, որ ներկայացան՝ իբր թե Ջորջիայից են: Ապակյա դռներից մի քիչ դեսը մի կին կանգնած ծխում էր՝ հենված իր սեւ ճամպուկին:

Չարդաքարը պեծպեծում էր քթի վրա: Հետո եկավ էն մեքենան, որին սպասում էր, ու վերջին պահին մեզ ձեռքով կանչելով՝ պոկեց գոնուցող վարորդներից, ու երկու ափը իրար սեղմած ականջի տակ դնելով՝ հասկացնում էր, թե գնանք մեր տանը կքնեք, առավոտյան կգարթնեք, կորոշեք՝ ինչ անեք: Իրար երես նայեցինք ես ու Սոնիկը, կինը Սադախյուրի առետրականի էր նման, նստեցինք մեքենան:

Վարորդը դուրս եկավ նրա հայրը՝ բենիմ բաբամ, որ քրդական երաժշտությունը քոքած՝ թոցնում էր մոխրագույն շոնդան ու բոռբոռում աղջկա վրա, թե էս ինչ խաղեր ես խաղում: Էն էլ ոնց որ ասում էր՝ տաքսիստները հարձակվել էին վրեքը, հո գիշերով չէ՞ի թողնելու դատարկ ճամփեքին: Բայց իրավիճակն էն տիպի էր, որ հայր ու աղջիկ ավելի անկանխատեսելի էին մեր համար, քան տաքսու վարորդները, որոնք քիչթեշատ նույնն են աշխարհիս բոլոր ծագերում: Հասանք: Կոշիկները հանել դռան մոտ ու ներս մտնել մի տուն, որ անհրաժեշտ ամեն բանով կահավորված է, բայց դատարկ է թվում, ու առարկաներից փշում է դատարկության պաղությունը: Մենյակներում մարդիկ են քնած: Բազմոցներին, հատակին: Մեզ առաջնորդում են հյուրասենյակ, որտեղ օդը սառն է, լույսը՝ շատ թույլ: Պապին արդեն իմացել է, որ Հայաստանից ենք, ու անդադար կրկնում է՝ Կարապետ Խաչո, մենք էլ սիրալիր գլխով ենք անում՝ ցույց չտալով մեր տարակուսանքը: Ընտանիքը քրդական է՝ իմանում ենք, երբ Սոնային հասկացնում է, որ տարիներ առաջ ռադիոյով միայն Էրիվանն էին լսում, ու մեծ աշխարհի հետ այդ կապը նրանց համար ապահովում էր Կարապետ Խաչոն, ու մենք որոշում ենք, որ Կարապետ Խաչոն, ուրեմն, քրդական հաղորդման հաղորդավարն էր, եւ ում անունը հետո լսելու էինք դիարբեքիրցի շատ մարդկանց բերանից:

Անկողնուց ելավ եկավ բարեկեց, մեր դիմաց նստեց Մեհմեդը: Որպես ուրախ լուր հայտնեցին, որ Մեհմեդը բանտից նոր է դուրս եկել, ու քույրը՝ Հեմդիեն, որ Ստամբուլում էր, բանտից հետո առաջին անգամ է տեսնում նրան: Ժպտում էինք ու փորձում էինք հասկանալ, թե ինչ է սիլան, որ անդադար կրկնում էին՝ փորձելով հատակեցնել Մեհմեդի նստելու պատճառը: Պապը մատը ատրճանակ սարքեց ու նշան բռնեց իմ վրա: Պապի հոմանիշների բառարանն էր: Չենք: Եթե չիմանայիր, որ նստել է, Մեհմեդի դեմքին նայելի, կիմանայիր, որ նստել է: Մեւ դեմքի վրա կախված ծանրություն, աչքերն արնակոխ, արտահայտության մեջ

շփոթ ու շփոթեցնող համ կենտրոնացածություն, համ ցրվածություն: Աչքերին նայելու համար դեմքի վրա ինչ-որ բան պիտի հաղթահարելի, որ մի պահ թվում էր՝ հոգնած ծալքերն են, մաշկի թխությունն ու մազակալած ծնոտը, հետո ավելի անշոշափելի բան էր դառնում ու էդ պատճառով՝ ավելի անշրջանցելի: Հայացքս խխունջի աչքերի պես հետ էր քաշվում: Ինքն էլ չէր նայում: Հայրը բարձր բողբոռում էր՝ նեղվելով, որ թուրքերեն լավ չենք հասկանում, ու հորդորելով, որ քրդերեն սովորենք: Քուրմանջի, քուրմանջի:

Անկողիններից ելան եկան Հենդիեի տղաները: Մեյհանը եվրոպական իր արտաքինը հրամցրեց գիշերով բաղնիքում թրջած-դգած բացգույն մազերով, սիպտակ մաշկով, ու սենյակում պտտեց իր մարմնի տպավորիչ մոտորիկան, որ ամեն մարդու բերանի բան չէ: Հաջորդ օրվանից մեզ շատ էր օգնելու թուրքերենի հարցում՝ բոլորից շուտ գուշակելով, թե ինչ ենք ուզում ասել, ու փոխադրելով մյուսների ասելիքը մեզ հասկանալի բառերի ու ժեստերի: Երկու ժամ հետո պապը մեզ հայտարարեց իր աղջիկները, Հենդիեին՝ մեր քույրը, Մեհմեդին՝ մեր եղբայրը, ու ասեց՝ ոչ մի հյուրանոց, մեր տանն եք մնալու: Մեր տանն ասելով՝ նկատի ուներ՝ Հենդիեի տանը, քանի որ ինքն ու կինն ապրում էին երկու շենք էնկողմ՝ Մեհմեդի, նրա կնոջ ու չորս երեխաների հետ: Ասեց՝ Մեհմեդն էլ իրա արաբայով ձեզ վարորդ, ուր պետք լինի, կտանի: Էդպես, քաշվեցինք մեզ հատկացված սենյակը, երկու կցված մահճակալների բրդե վերմակի տակ, ու առավոտյան զարթնեցինք Ստամբուլից հորքուրի բերած նվերներն ստացող երեխաների ճովողյունից: Նվիրված շորերն հետո տարածվեցին տնով մեկ, որ անփույթ ձեռքով հա խոթվում էին տոպրակները, բայց հետո էլի ոտ առած ելնում ու փովում էին տան միջանցիկ ճամփեքին: Նախաճաշը գետնին էր փոված, սեղանի ոտքերին շատ մոտ, Մեհմեդի որդի Ահմեդը համարյա սեղանի տակից էր հաց ուտում: Երեսին թաթոներ ունեցող տատը նամազ էր անում նախաճաշի սինիին կից: Մինու վրա ֆոֆոում էին նեղփոր թեյի բաժակները եւ այլն:

Մեհմեդն իր արաբա Հոնդայով մեզ տարավ ման տալու: Կաղում էր: Գիշերը բացել, ցույց էր տվել ոտքը. ծնկի բաժակը խրել, դանակով քանդել էին, հետո դանակը բռնել էր, երբ հարվածն ընթացել էր սրտի ուղղությամբ, բայց պտտել ու կտրել էին բութ մատը: Հիվանդանոցից դրել, մեկից բանտ էին տարել, որից Մեհմեդն երկու բառ էր ասում՝ չոք գոռ: Մատը չէր ծալվում, ծունկը չէր ծալվում,

բայց ինչքան ասեցի՝ էս պարիսպը մի բարձրացի, չլսեց: Դիարբեքիրի պարիսպը:

Պարիսպը՝ պարիսպ-ամրոցը՝ դիտաշտարակ-քաղաքը տարածվում է Դիարբեքիրի միջով՝ երկար, հաստ ու սեւ: Քաղաքի գրանիտե անգին քարը: Թեքադարս աստիճաններով: Շուրջբոլորը եղած ամեն բան թղթե սաղավարտ է՝ առետրի ու կենցաղային աղբի պաճուճանքներով: Մեհմեդն ասում է՝ չինականից հետո երկրորդն է, ու դիք մարմինն ուղղում է դեպի պարսպի վերընթաց աստիճանները, որոնք բարձրանալիս՝ կարծես երկու տակ է լինում: Մեծ սեւ քարերով մեծ սեւ պարիսպ, որ խոյանում է դաշտի տկար բուստանների վրա: Հզորության ու գեղեցկության գեներատոր: Վիքիպեդիան ասում է՝ ասորիներն են սարքել: Մենք մեր ներսում նրան հայկական համարելով ենք քայլում, ու էդ համարելը ընդունել են մենակ մեր ոտքերը, որ հաստատուն հենվում են աստիճաններին ու առաջ հրվում: Խոր Վիրապին է նման, դիտաշտարակի նեղ լուսամուտները նույն ձեռով նայում են բաց դաշտին, մյուս կողմից էլ՝ պարսպի սեփական երկար պոչին, որ սեւ պայթում է կանաչի մեջ: Ջգացողություններս խուսափում են հստակությունից, գնում-գալիս են հետաքրքրության ու հոգնածության շրջանակի մեջ, գիտակցությունս թափառում է, չի ուզում կենտրոնանալ, ընդհանրապես ուզելու հարցը վերանում է, միտքս սկսում է հաժել միայն լուսանկարչական պարտադիր կանոնակարգի վրա, որը նույնպես չեմ ուզում կատարել: Ընդամենը մի նկար արեցի, մի պարզ ընդհանուր տեսարան դաշտի ու պարսպի մի հատվածի, ու միտքս տարված մնաց միայն Մեհմեդի ծնկի ցավով, որը գսպած՝ դիք մարմինը քարշ էր տալիս՝ փոքրիկ տեսախցիկս ասի մեջ սեղմած՝ ինչպես բեռ: Ջբոսաշրջիկները շատ էին, ու լուսանկարների մի ամբողջ հորդա գնաց միանալու լուսանկարների անսպառ հորձանուտին, որտեղ առարկաները գրկված են իմաստից ու անանուն:

Մեհմեդն արագ էր քշում՝ քրդական երաժշտության խզզոցն հասցրած վերջին խազին: Նուրբ դաստակները պտտվում էին դեկի վրա. թափով թեքում էր կամ շեշտակի կանգնում: Մեհմեդի նման երկար, ճարտարապետական ձեւ ունեցող եղունգներով մարդկանց ֆիզիոգնոմիկական թեստերն համարում են ստեղծագործական մեծ հակումներ ունեցողներ: Բայց Մեհմեդն ինտերնետ կաֆե ուներ: Ձեռքերը պատված էին անհամար սպիներով ու դողում էին, երբ

մանր շարժումներ էր անում, օրինակ՝ երբ շրթունքներին էր տանում թեյի բաժակը կամ հեռախոսի մեջ ինչ-որ բան էր ցույց տալիս: Ներքին ինքնակա բարեկրթությունը բեռնվել էր ավանդույթների ու դաստիարակության հաստակճեպ շերտով, ու կնոջը չէր թողնում զանգել իրեն կամ լուսանկարվել կամ ֆեյսբուքի էջ բացել, մի տեղ գնալ ու հագարումի այլ քաքուքեր:

Մերջանը՝ կանաչ աչքեր, բաց կանաչ մաշկ, լայն կուրծք ու անընդհատ գլխից սահող գլխաշոր, որ ուղղում էր հմուտ ձեռքով, բայց դժկամորեն ու շատ ուշ, երբ արդեն բացվել էին ներկած մազերի ամենամերժեի փնջերն անգամ: Քսանյոթ տարեկանում չորս երեխա ուներ, երկուսն էլ մահացել էին: Խեղճ չէր, իրեն հասանելիքը պահանջում էր, ինչքան թույլ էր տալիս ավանդույթը. ավանդույթն էր քիչ բան թույլ տալիս: Կեսրարն օկուպանտի իր վարքագծով նստում էր մինչև ուշ գիշեր՝ անապատի ժամանակն ուզող գրույցների, ու մի օր Մերջանի համբերությունը հատավ: Կեսրարին շիշը շարեց, որ շերմությունը վրեն երեխեն գրկին, Ահմեդն էլ աստանը ցավելով՝ նստած սպասում են, թե երբ պիտի բաբամի քեֆը թմնի, որ տուն տանի իրենց: Կեսրարն ու Հեմդիե տալը կատաղի աբառոտ ֆոռացին, իսկ Մեհմեդը լոեց: Հետո դուռը շրխկացրեց ու գնաց, կնոջը չտարավ:

Մեհմեդի հայացքի դժվարամարսությունը երկրորդ օրվանից անցավ: Աչքերը սկսեցին ձեռք բերել խաղողի ողկույզի հայտնի համեմատությունը, որն, ինչ որ է, էդպես էլ կար: Ու, Մոնայի ասելով՝ անուշություն էր լցվում դրանց մեջ, երբ փափուկ թաթերի վրա նրան էր մոտենում աղջիկը՝ Էջեմ Սուն, որ վայրի ձեւեր ուներ՝ հոխորտալու, չինագանդվելու, անթարթ նայելու: Վայրի, որ է հիասքանչ: Մեհմեդի աչքերը կուլ էին գնում, երբ քթով հետեւում էր գրկի մեջ շարժվող աղջկա մազերին, հոտ էր քաշում մի բանից, որի անունը թուրքերենից թարգմանվում է՝ թագուհու ջուր : Էջեմ Սու ~

Հեմդիեի տունը ոստիկանության որոնումներից խուսափողների ապաստարանն էր: Մեհմեդն իր տանը չէր քնում, քնում էր Հեմդիեի տանը, այստեղ էր քնում նաև ոստիկանության մյուս փնտրածը՝ Հաքանը, նրանց մեծ քրոջ որդին՝ մի տասնվեց տարեկան պատանի, որի պատմության շուրջը ծավալված թուրքերենի մեջ էլի պտտվում էր սիլա բառը: Իսկ Ստամբուլում գողության համար դատված էր նրանց բազմաթիվ քույրերից մյուսը, որի համար զանգել ու բարեխոսում էր

քույրերից երրորդը, որ լավ դատապաշտպան վարձելու համար փող ուղարկեն:
Մեհմեդը վրդովված շարժում էր երկար ձեռքերը թե՛ ինքը կիլոյով ոսկի ա
գողացել, ես երկու ամիս շարունակ փորել եմ, որ հայկական պահած ոսկիներ
գտնեն, իսկ աշխատանքը ուտել կուզի, խմել կուզի, էդքան աշխատել եմ, մի քոռ
կոպեկ էլ չեմ գտել, գտածս ոսկորներով ու ատամներով լի մի կճուճ ա եղել, էն էլ
ո՞ւմ էր պետք, ասում է մեզ: Ասում է Մեհմեդը, մեզ:

Երբ գրքերի խանութում հանդիպեցինք Ֆրեդերիկին, որ հուլանդացի լրագրող կին
էր, ու արդեն քանի տարի է՝ Դիարբեքիրում էր ապրում, ու երբ իմացավ
հայաստանցի ենք, անմիջապես խնդրեց հարցազրույց վերցնել: Նստեցինք
հայկական իջեւանատան կամարակապ անկյունում, որը հիմա գրախանութ էր,
եւ որի տերը հայերեն էր սովորել ու փայլում էր ուրախությունից մեզ հանդիպելու
համար: Ֆրեդերիկն ինձ հարց տվեց, ես ասեցի՝ ոչինչ չեմ գգում, դատարկ եմ,
տեղին չեմ կապվում, Մեհմեդի ընտանիքն եմ սիրում, հա, գիտեմ, որ հայկական
շինություններ են, Սոնայի հետ մեկ-մեկ ավերս դնում ենք պատերին, սեւ սիրուն
քար է, բայց կտրված, հեռու եմ գգում, ջարդված, երկու կես: Մի քիչ զարմացավ
ու ավելի զարմացավ, երբ իմացավ՝ քրդերի ներողության տերը չենք գգում մեզ.
Թե իսկապես հասել են էն տեղին, որտեղից արձակվում է ներողության շշուկը,
իրենց հոգու հանգստին լավ: Որ ներողություն խնդրողը ես լինեի, չէի խնդրի, չէի
կարողանա, կուզեի գետինը բացվի, մտնեմ մեջը: Հարցական մնաց Ֆրեդերիկը:
Բարձրահասակ կին էր, ինձ համար միշտ տարօրինակ է վերեւ նայելով խոսելը:

Հաջորդ օրվանից սկսեցինք քաղաքում առանց Մեհմեդի շրջել: Մերջանն ու
Մեհմեդը կովել էին: Նախորդ օրը Մերջանն իրեն թույլ էր տված եղել զանգել
Մեհմեդին՝ ասելու, որ Ահմեդի ատամը ցավում է, պետք է բժշկի տանել,
Յուսուֆն էլ տաքություն ունի, իսկ Մեհմեդը չէր գնացել, մեր հետ էր: Մերջանին
տվեցինք մեր համարները, ասեցինք՝ մեզ զանգի, ու մարդուդ էլ հետներս չենք
տանի, իրան պատիժ: Ու չտարանք:

Նոր ու մեծ թաղամասերով շրջանակված պարսպից ներս ընկած է հին քաղաքը,
հին քաղաքի մեջ՝ կենտրոնական հրապարակի շուրջը, ընկած են սեւքար տները՝
աչքից ծածկված աշխույժ առետրային գոտով, ու սեւ տների ու նեղ փողոցների
ցանցի մեջ կանգնած է Սուրբ Կիրակոս եկեղեցին՝ շուրջը հավաքած ու պահած

բոլոր այն գեղեցիկ ու նրբաճ շինությունները, որոնց վրա հերթով մատր դնելով Արմենն ասում է՝ հայու դուն, հայու դուն, հայու դուն, հայու դուն, հայու դուն, հայու դուն, հայու դուն... Անվերջ: Որոշները դատարկ են, մի մասը վերածվել է գողտրիկ թեյարանների, մեծ մասը բնակեցված է: Քրդեր են ապրում: Տներն անմիջապես չես նկատի, դրանք առանձին-առանձին չեն կանգնած. քայլում ես նեղ սալքարե նրբանցքով, որի երկու կողմից բարձր պարսպի նման պատեր են միշտ, ու միայն ցածրիկ փայտե կամ երկաթե դուռը բացելով է, որ կարող ես տեսնել՝ ինչ է հայու դունը: Երկհարկանի գեղեցիկ կառույց է, որ չորս կողմից շրջանակել է բակը՝ իր փոքրիկ ավազանով, ծաղիկներով, կամարակապ իրար կողքի շարված բարձր լուսամուտներով, ճաղաշար աստիճաններով, ու դռներ ամեն տեղ: Կարծես սենյակներն իրար են կցվել ոչ թե ներքին դռներով, այլ բոլոր սենյակներն ունեցել են դեպի բակը բացվող իրենց առանձին դռները: Ամեն դեպքում, այդպես է այն տներում, որոնք վերածվել են թեյարանների ու խնամքով պահպանվում են՝ հիմնականում նկատի ունենալով զբոսաշրջության մեծ հեռանկարները Դիարբեքիում:

«Մշակույթի տուն» կոչվող տղամարդկանց հավաքատեղին, որի դուռը հետաքրքրությունից դրդված բացեցի, ու ընկանք Դիարբեքիի քրդական ինտիլիգենցիայի միջավայրը՝ բժիշկներ, դասախոսներ, արվեստի ու արհեստի մարդիկ, որ շրջան բռնած նստած էին բակում՝ անհամար բաժակների թեյագույն խճանկարի մեջ, էլի հայու դուն էր: Այդ մարդկանցից երկուսից մեկի պապն էր Արշալույս եղել, մյուսի՝ տատը: Նա, ում տատն էր Արշալույս եղել, խնդրեց տատի անունը հայերեն գրել թղթի վրա, ու Սոնայի հանձնած թերթիկին երկար նայելուց հետո՝ խնամքով ծալեց, դրեց ծոցագրպանը: Ինչ-որ մեկը ինչ-որ տվյալ էր ասել Սոնային, որ քաղաքի երկու միլիոն բնակչությունից յուրաքանչյուր հինգերորդը հայ է, որ վախից կամ ամոթից թաքցնում է իր ինքնությունը: Բայց ինչ ես էի զգում, ոչ էնքան վախից ու ամոթից, ինչքան արդեն իներցիայից, որի տակ ճգնվում է յուրաքանչյուր ձեռնարկի ցանկություն: Թեյ էինք խմում հայու դան բակում, ու մի տեսակ լուռ, խոնարհ հետքաշվածություն կար այդ մարդկանց մեջ, որոնց լրիվ տղամարդկային միջավայրը, որտեղ երբեք կին չէր լինում, երկու կին էին մտել, ում ավելի շատ իրավունք վերապահեցին հանկարծ, քան իրենց: Ու մենք մեզ հատկացվածից բաժին հանեցինք՝ խնդրելով՝ երբեմն էստեղ հրավիրեք ձեր կանանց կամ ձեր կին ինտելեկտուալ ընկերներին: Տխուր

Ժպտացին ինտելեկտուալ տղամարդիկ երկու երիտասարդ կանանց՝ եկած անտանելի հեռու մի երկրից, որի ներկայությունն զգում ու չէին զգում իրենց ոտքերի տակ:

Գնում էինք ձայների, հոտերի ուղղությամբ, սեւ քարերի ուղղությամբ, հետեւում էինք մեր ներքին GPS-ներին: Մեհմեղը մեզ էդ տեղերը չէր տանի, ինքն էլ տեղյակ չէր դրանցից: Քրդական երաժշտության օրերի հանդիպեցինք՝ նեղլիկ փողոցներից մեկն ընտրելով: Որտեղ նվագվեց նաև հայկական երաժշտություն՝ քրդերեն բառերով, ու տոննաներով չիքյոֆթե վաճառվեց հայու դան ճաշակավոր բակում: Դելիլոն է քրդերի ամենահայտնի պարը, որը նախորդ օրը կամուրջի վրա էլ էի պարել՝ Տասակնանի կամուրջի (Օն գյոզլու քյոփրու), որի տակից հոսում էր Տիգրիսը, որ այլ անուն ուներ արդեն՝ Դիջլե, ու պարելիս՝ մի միտք էր սողոսկում անընդհատ, որ ինչ-որ բան եմ վերականգնում կամ հաստատում իմ պարով, բայց հետո էլի քանդվում ու բեկոր-բեկոր անհետանում էր դեղին պղտոր լույսով հոսող մարմանդ գետի մեջ:

Արամ Խաչիկյանը հայերին բարեելիս ու հրաժեշտ տալիս թորքերեն է խոսում, որի միջից հանկարծ գատորոշվում է քուրիկ բառը: Միշտ եկեղեցու տարածքում է լինում՝ մուգ մոխրագույն կոստյումով: Եկեղեցում հանդիպեցինք նաև նրա դստերը, ում բարելի ողջույնը, որ պիտի ընդգրկեր երկու թռուցիկ համբույր յուրաքանչյուր այտին, ինչպես ընդունված է Թուրքիայում, տեեց երկար, Դիարբեքիրի պարսպի չափ երկար, ընդգրկեց ագուցված թեւերի պինդ սեղմումներ, իրար աչքերի մեջ նայել-նայել, իրար մեջ շրջանառվել, լեզու հյուսել: Հայրը հայերենի չինացությունից կապված լեզուն դնում է եկեղեցու զանգերի բերանը, ու հնչեցնում է օրը երկու անգամ՝ քու-րիկ, քու-րիկ, քու-րիկ, քու-րի՛կ:

Քսան օր էր, ինչ Մալաթիայից տեղափոխվել ու եկեղեցում էր աշխատում Գյուզիդեն: Խոսելիս՝ հայացքը պտտվում էր եկեղեցու բարձր պատերի, բարձր զանգակատան վրա՝ անձանոթ ու սիրելի մի բան պաշտպանողի նման: Տարիներ առաջ էր իմացել, որ մայրը հայ է: Պարտք ուներ երեւի, չգիտեմ, ինքն էլ չգիտեր: Ֆրանսերեն ու անգլերեն էր խոսում, ամեն հարցով Գյուզիդեն էր կանգնած. եկեղեցու ուղեվարն էր, պահակն էր, հուշանվերների խանութի վաճառողն էր, Դիարբեքիրի տեղեկատուն էր, հայերենի ուսուցիչ ման եկողն էր, հայերեն

սովորել ուզողն էր:

Իր հայությունից ու դրա գիտակցության ցավից ու հրճվանքից ներվահան եղած Արմենը՝ Աբդուտահիրը, որ հայու դներն էր ցուցանում հատ-հատ, անդադար կրկնում էր Հայաստանում կամ այլուր ճանաչած հայ մարդկանց անունները: «Մերի Մուսինյան, հայ, հա՞, խնդիր չկա, Նարինե, բժիշկ, հայ, գսիրեմ, արի դուն, հա՞, շատ լավ, խնդիր չկա»,- գրպանից հանում էր աշխարհի ամենափոքր օբսիդիանից քառակուսին, որի վրա խաչ էր փորագրված, ափի մեջ դրած սեղմում էր անտանելի, բայց քառակուսին փոքր էր, մատները տեղ չէին հասնում, ու նորից հատաչելով գրպանն էր դնում, միշտ այն փոքրիկ գրպանը, որ լինում է ջինսե տաբատների իսկական գրպանից ուղղանկյուն եզրով դուրս ցցված, ու որից փոքրիկ առարկաները դուրս են գալիս մի մատով փորփրելով միայն:

Մութն ընկել է, Արմենն անընդհատ ժամին է նայում, քուրդ կինը բացասական վերաբերմունք ունի նրա հայության ու դրա հետ կապված ուշացումների հանդեպ, բայց Արմենը դողեղող փոքրիկ հեռախոսով երգեր է դնում՝ Դլե յաման, Նագան, Եվա Ռիվաս, Կոմիտաս, ու մենք փոքրիկ հրապարակում նստած երգում ենք՝ ձայնակցելով հեռախոսին, ու քուրդ երեխաների հրոսակախումբը գրոհում է ու ետ քաշվում՝ կատուների նման մագլցելով կանգառի մետաղյա ծածկատանիքի վրա, ավիրում է ծաղկաթաղարներն ու ճյուղակոտոր անում ծառը, ու հետաքրքրությունն սպառած՝ նորից դառնում է մեզ: Մեզ, որ ձայնատարած գիշերային սովերներ ենք:

Երրորդ օրն ու մեր ճամփորդությունը եզրափակելու է Օսնիկ Դինքչյանի համերգը: Նույն պատմությունն է. քրդերի ձեռքով փրկված հայր, հոր պատմություններն հիշող, ի վերջո հոր ծննդավայրը վերադարձող ու ճանաչող գավակ, կոտորածների մեջ կորած մայր, մոր երգելու շնորհ ու ձայն, փոխանցվող գեներ, որոնք Օսնիկի որդու՝ Արայի ձեռքն են տվել ուղը, մինչ տարիներ հետո, երբ արդեն հասակավոր մարդիկ են երկուսն էլ, մի կնոջից կիմանան, որ մորեղբայրը նույնպես ուղ է նվագել, իսկ մոր ձայնի համբավը տարածված է եղել ամբողջ քաղաքում: Հետո ամեն ինչ մշուշ է, ու հիմա առաջին անգամ ու նորից Դիարբեքիրում հնչում է այդ կնոջ ձայնը՝ իր որդու բերանից, ու թոռան ձեռքին իր եղբոր ուղն է:

Դահլիճը լիքն է: Բեմ է մտնում աշխարհի հասակավոր մարդկանցից ամենաանուշն ու ամենատխուրը, որ Տիգրանակերտ-Դիարբեքիի երգերն է երգում հենց այն ձեով, որով դրանք պիտի երգվեն: Ես ու Սոնան հասկանում ենք, որ ուշ է: Համերգ էինք հրավիրել մեր բոլոր տնեցիներին ու Մեհմեդին երեք օր խնդրել էինք Մերջանին համերգ բերել. խոստացել էր... Այդ համերգով հետաքրքրված էր միայն Մերջանը, ով իր օրում ոչ մի տեղ չէր գնացել՝ համերգ, թատրոն, որեւէ մշակութային իրադարձություն չէր կատարվել նրա կյանքում: Առավոտնից իրիկուն կովշտում էր Մեհմեդի հետ համերգի համար, չէր խնդրում, պահանջում էր իր իրավունքը, բայց նախօրոք ընդունածի պես, որ դրա իրավունքը չունի: Չոչուիս բառով փակում էին Մերջանի բերանը: Մերջանը իր երեխաների մանկապարտեզն էր: Նրա համար ամենաանհասկանալի ու անհավանական բանն էն էր, որ ես Թուրքիայում եմ, ամուսինս՝ Ամերիկայում, իսկ Դիարբեքիը ոտի տակ եմ տվել իր ամուսնու հետ: Մերջանին լեզու պետք չէր՝ ցույց տալու իր ապշանքն ու վարանումը: Դրանից բացի՝ Մերջանը ոչ վերբալ հաղորդակցության առաջնակարգ մասնագետ էր, ու նրա տաղանդը խփում էր մինչև սուրդո թարգմանություն, բայց աչքերի ու ձեռքերի օժանդակ կիրառությունից գատ՝ գիտեր ձայնարկություններն այնպես շարել ու հնչեցնել, որ բառարանի ու քերականության հարցը վերանում էր: Այդպես երկար գրուցել ենք Մերջանի հետ աշխարհի փոքր ու մեծ հարցերի շուրջ՝ ֆեմինիզմից մինչև Մեհմեդի ինտերնետ կաֆեն, ու որ ամեն գիշեր հիվանդանոց արշավել պետք չէ ամբողջ ընտանիքով՝ մենք էլ հետները, երբ երեխեքից մեկի ջերմությունը բարձրանում է: Լավ է՝ բոբիկ ման չգան ու էն ասպիրինը, որ բժիշկն է տալիս, տանը խմեն:

Մերջանին համերգ չթողեցին: Իրենք էլ չեկան: Տնից ոչ մեկը չեկավ, հիվանդանոց էին գնացել. Հուսեինի ջերմությունը բարձրացել էր, Սեյհանն էլ նույն ճամփին էր: Մերջանը առավոտնից պատրաստվել էր: Երբ սենյակում հագնվում էինք, խորհուրդներ էր տալիս: Հագանք էն, ինչ մատնացույց արեց, քսեցինք էն, ինչ մատնացույց արեց: Սիրուն էինք... Բայց Մերջանը չեկավ:

Էլի մի բան կորցրածի պես նստեցինք դահլիճում՝ Արմենը մեր մեջտեղում՝ քրտինքը հուզմունքից վրայից չռալով:

Կարոտո՞տ, ախ, կա՛րո՞տ... սկսվեց երգը... Բռնեց՝ կոկորդ, աչք, քիթ, բերան, սեղմեց, սեղմեց, սեղմեց: Արմենի վրայով Տիգրիսն էր հոսում՝ աղի ջրերով թրջելով մարմինը: Երեք օրվա մեջ առաջին անգամ մի բան սուր ու բուրբ գլխով կոկորդով ստամոքսով մխրճվեց ու դմփոցով ընկավ որովայնիս հատակը, ու դմփոցի ձայնը հասավ ականջներին: Մի վայրկյան միայն գիտակցեցի եղածը, ամբողջ մարմինս գիտակցություն դառավ, լողաց ցավի ու ճենճահոտի մեջ, թանձր ջուրը հաստ մակերեսությամբ գմփաց ափերին, կույ տվեցի, կույ տվեցի, կույ տվեցի, հյուծվեցի, գլուխս հենեցի թիկնակին: Խորը շունչ: Հետո անանունին փոխարինելու եկավ վճիտ բանը: Սկսեցի տեսնել երգի պատանուն, ով մթնշաղի կապույտ լույսի մեջ առաջին անգամ բռնել է սիրած աղջկան, ում մեջքը բարակ է, սեղմել չի կարելի, ու դողահար սրսփում են իրար առաջ մեր կողքի նեղլիկ փողոցում, որտեղ իրիկվա այս ժամին շատ մարդ չի լինում:

Պատկերացրի, որ տղան Սերհատն է: Մի խորտկարանի մատուցողն էր, որ գնաց-եկավ, հարցեր տվեց, ու հաշիվը բերելիս՝ ասեց, որ հայրը հայ է: Բարակ էր, սիրուն էր, սրսփան էր: Մեր մեջ մի բան էր տեսել, պտտվում էր, պտտվում էր, տեղը չէր բերում: Սերհատին էլ էինք համերգ հրավիրել, աշխատանքի լինելու պատճառով չեկավ, բայց հազար անգամ զանգեց, հազար հատ էլ հաղորդագրություն գրեց: Համերգի ժամանակ բռնվեցի Սերհատին թմբիրից արթնացնելու տենդով: Երեւի նույնն էլ Սոնան, որովհետեւ համերգից հետո Դինկջյանի մասին պատմող ֆիլմի սկավառակն առավ Սերհատի համար, ու մենք գիշերով գնացինք նրա գործի տեղը՝ Արմենն էլ հետներս՝ աչքը հեռախոսին, որի վրա անընդհատ տոգոմ էր քուրդ կնոջ զանգը: Ես աղջկան սպասողին Սերհատին էի պատկերացնում, նեղ փողոցներում Սերհատին էի պատկերացնում, պատկերացնում էի, որ պիտի իմանա, որ դրանք իրեն են պատկանում, որ ամենաշատը իրեն են սագում, որ իր բարակությունը դրանց համեմատ է: Բայց Սերհատն էնքան հոգնած էր գործից հետո, որ մոռացել էր էն մի քանի անգլերեն բառն էլ, որ խոսում էր նախորդ օրը, ու չնայած սկավառակն ուրախությամբ ընդունեց, բայց հնար ու ուժ չգտանք բացատրելու, թե ինչի էինք փոխակերպել նրան, ու էլ ինչ կարող էր նա լինել: Գնաց, հետո նոր գլխի ընկավ, որ առավոտյան գնում ենք, վերադառնում ենք Ստամբուլ, սկսեց էլի զանգել, մի կերպ, մի երկու անգլերեն բառով բացատրել, որ առավոտյան օդանավակայան կգա՝ մեզ ճանապարհելու:

Սպասեցինք Սերհատին, ինքնաթիռն արդեն նստեցնում էին, բայց մենք կանգնել էինք առավոտյան ժխորի ու տաքսիստների ոգեւորության մեջ, սպասում էինք՝ ավելի շատ մտածելով, որ մեղք է՝ գա-հասնի ու մեզ չգտնի: Բայց Սերհատն էլի գանգեց թե՛ գործի են: Հետո որ երեկոյան արդեն Թաքսիմում քայլում էինք, հա գանգում էր, չգիտեմ՝ չէր հավատում, թե չէր հասկանում, որ արդեն Ստամբուլում ենք, անընդհատ հարցնում էր՝ you are in Diyarbakir? Ասում էինք՝ չէ, Սերհատ, Ստամբուլում ենք, մի վատ կազմակերպված հայկական համերգի էինք գնացել, հիմա դրանից հետո տուն ենք գնում, Թաքսիմում ենք, անձրեւ ա գալիս: